ձուկս. իսկոյն փութացաւ մի ոմն ի մահտեսց եւ աւետիս պատրիարքին և ասաց. հայր սուրբ. յԱղթամարու Աբոռի երաժիշտն ասս է. պատրիարքն հարցուց. տիրացու Ներսէ՞սն է. և նա ասաց, այո՛: Յայնժամ մեծ պատրիարքն Յովակիմ զժամ աղօթից յետս դարձուց և զՏէր զի քազում սկսեաց, և ապա կոչեաց զտիրացու Ներսէս ի դաս: Եւ իբրև երաց նա զբերան իւր գովելի և հնչեցոյց զձայն իւր ամենաբաղձալի ի լսելիս ամենայն ժողովրդեան. ահա զրոհ տուեալ ամենայն աղգայինք և լսել զեղանակն անլսելի. որք էին ի Ցունաց, ի Լատինացւոց, և ի մտանել նոցա ի Սուրբ Յակոբայ տաճարն. ժամ աղօթից հասեալ էր Հարց, այսինքն Որ դասուց: Եւ յետ արձակման ժամուն կոչեաց զնա պատրիարքն և հարցուց ի նմանէ զամենայն բան, յարտաքին գրոց, և նա ետ պատասխանի անսխալ և անսայթաքելի: Եւ իբրև նայեցաւ պատրիարքն թէ չունի նա մարմնական ընչից պակասութիւն, ետ նմա զեկեղեցւոյ անօթս. այսինքն՝ արծաթէ բուրվառ մի, արծաթէ ջահ մի, քչոց մի, ևս չատ տղաչեաց թէ ասա կեցիր, բայց նա ոչ եկաց անդ, այլ դարձաւ փութով ի Ս. յԱթոռն յԱղթամարու ի թվին ՌՃՂ» (=1741) (Բիւզանդիոն. Թ. 1199. 1900, Սեպտ. 14|27):

ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊՍ. ԼԱՄԲՐՈՆԱՑԻ.— Ծ. 1153ին. Զ. 1168 ին, Ներսէս Շնորհալի կթղէն. արքեպս. Տարսոնի 1181ին. Ներսէս Լամբրոնացի 1179ին կ'այցելէ Երուսաղէմի Ս. Տեղիքը ըստ Սիսուանի (էջ 87). ինքը արդէն Գրիգոր Ա. պապի Տրատախօսութեանց գիրքին թարգմանութեան յիշատակարանին մէջ կը յիշէ իր ուխտաւորութիւնը հետևեալ կերպով. «Յերուսաղէմ ի սուրբ քաղաքն յոր ընթացայ՝ տեսի պտուղ սիրոյ սոցին, յոր ոչ հասայ. որովք ջեռեալ որք յարևմուտս սուրբք նոցա՝ թէ տան պտուղ զայս սքանչելիսս ոչ զարմացայ»: (Հայապատում. էջ 429): Լամբրոնացիին ուխտաւորութեան ճիշդ թուականն է 1187, որ ժամանակ ինքը ականատես եղած է Սալահէտտինի յարձակումներուն և Երուսաղէմի գրաւման. ինչպէս յայտնի կ'ըլլայ Երնջակի Ս. Կարապետ վանքի ձեռագիր Աստուածաշունչին Յայտնութեան գիրքին վերջը գրուած յիշատակարանէն. որ է հետևեալը. «... քանզի ակներև աչաց մերոց սուրբ և աստուածակոխ քաղաքն Երուսաղէմ, որ յափշտակեցաւ ի